ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր

ՈՐՈՇՈՒՄ N 106 12 դեկտեմբեր 2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ <<ՋԵՐՄՈՒԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ԵՎ <<ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2007ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԹԻՎ 106 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ <<ՋԵՐՄՈՒԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերի, 67-րդհոդվածի 1-ին կետի <<ա>> և <<է>> ենթակետերի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասի, <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ 728 հրամանագրի 1.6 կետի դրույթներով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. հունիսի 17-ի << Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև 2010թվականի դեկտեմբերի 27-ին ստորագրված պայմանագրի շրջանակներում շտապ օգնության գծային ավտոմեքենան, Շտապ օգնության ռեանիմոբիլը և դրանց օժանդակ սարքավորումները նվիրաբերելու մասին>> թիվ 874-Ա որոշման 4-րդ կետի պահանջի

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Ջերմուկի առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը

ավելացնել 13875000դրամով, այն սահմանելով 64733000դրամ, որը համապատասխանում է 50858հասարակ(սովորական) բաժնետոմսի՝ մեկ բաժնետոմսի արժեքը՝ 1273դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2007թվականի նոյեմբերի 5-ի << <<Ջերմուկի հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերության անվանափոխման մասին>> թիվ 94որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Ջերմուկի առողջության կենտրոն >> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4-րդ կետի 4.2. ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 64733000դրամ, որը կազմում է 50858 հասարակ (սովորական) բաժնետոմս:Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1273դրամ:

1 հասարակ(սովորական) բաժնետոմսը տեղաբաշխված է և պատկանում է հիմնադիրին՝ Հայաստանի Հանրապետությանը>>:

3. Հանձնարարել՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Ջերմուկի առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Վարդան Սարգսյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան փաստաթղթերի փաթեթը ներկայացնել Պետական ռեգիստրի գործակալության Վայքի տարածքային բաժին, պետական ընթացիկ գրանցում կատարելու համար:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Խաչիկ Գևորգյանին:

Ս. ԲԱԳՐԱՏՅԱՆ